4.03.2022թ.
349-72

Արդարադատության նախարար
Կարեն Անդրեասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի Անդրեասյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի տեղեկություն ստանալու հարցմանն ի պատասխան, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը գրությամբ տեղեկացրել է, որ պահանջվող տեղեկությունների համար պետք է դիմել Արդարադատության նախարարություն:

Ուստի, ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1) Խնդրում եմ տրամադրել Հայաստանի ինքնագնահատման ստուգաթերթերի (checklist) պատճենը, որը ստեղծվել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (UNCAC) կատարման ընթացքի գնահատման առաջին և երկրորդ փուլերի շրջանակում: Եթե փաստաթղթերը հասանելի են մի քանի լեզուներով, խնդրում եմ ներկայացնել դրանք բոլոր առկա լեզուներով: Եթե փաստաթղթերն արդեն հասանելի են առցանց, խնդրում եմ տրամադրել հղում (ներ):

2) Խնդրում եմ տրամադրել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կատարման երկրորդ փուլի գնահատման ամբողջական զեկույցը: Եթե այն հասանելի է մի քանի լեզուներով, խնդրում եմ տրամադրել փաստաթուղթը առկա բոլոր լեզուներով: Եթե փաստաթղթերն արդեն հասանելի են առցանց, խնդրում եմ տրամադրել հղում(ներ):

3) Արդյո՞ք քաղհասարակության ներկայացուցիչները մասնակցել կամ նպաստել են ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կատարման ընթացքի գնահատման առաջին և երկրորդ փուլերին:

ա. Եթե այո, խնդրում եմ տրամադրել այդ կազմակերպությունների կամ անձանց ցանկը, որոնք մասնակցել կամ նպաստել են գնահատման գործընթացին:

բ. Առկայության դեպքում, խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այդ կազմակերպությունների կամ անձանց մասնակցության ձևաչափի և աջակցության մասին: Նաև խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն, թե որքանով է Կառավարությունը հաշվի առել քաղաքացիական հասարակության կարծիքը:

գ) Եղե՞լ է արդյոք հանդիպում ազգային գնահատողների և ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ: Եթե այո, խնդրում եմ նշել որ կազմակերպությունների հետ և ովքեր են մասնակցել:

4) Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի գնահատման երկրորդ փուլի ներկա կարգավիճակի/ընթացքի մասին:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

5) Խնդրում եմ տրամադրել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի հարցով Հայաստանի կառավարության հիմնական պատասխանատուի (գնահատման երկրորդ փուլը համակարգող անձի) անունը և կոնտակտային տվյալները:

6) Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն և ցանկացած առկա փաստաթուղթ այն գործողությունների վերաբերյալ, որոնք ձեռնարկվել են ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կատարման ընթացքի գնահատման առաջին և երկրորդ փուլերում արված բացահայտումներն ու առաջարկությունները քննարկելու, հասցեագրելու և կյանքի կոչելու համար:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Խնդրում ենք տեղեկությունները տրամադրել հետևյալ ձևաչափերից որևէ մեկով՝

.doc or .docx or .rtf:

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան